

գեկույցներ պատրաստելու և այլ հարցերով կարելի է դիմել ՄԱԿ-ի հատուկ գեկուցողներին:

«Մարդու իրավունքների ոլորտում միջազգային իրավունք»՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (ՄԻՀՀ), Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ԶԶԻՄՄԴ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՏՄՄԻՄՄԴ) ստանդարտներն այժմ կիրառելի են բոլոր մարդկանց համար:

**«Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա**

Կոնվենցիան քննարկվել է 1979 թ. Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի շրջանակում: Այն վերաբերում է մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածությանը: Կոնվենցիայի նպատակն է պաշտպանել շրջակա միջավայրն օդի աղտոտվածությունից, աստիճանաբար կրճատել և կանխարգելել օդի աղտոտումը, այդ թվում՝ մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածությունը: Կոնվենցիան ապահովում է՝

- արտանետումների, չափումների և տվյալների մոդելավորման վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն,
- տեղեկատվություն Եկոհամակարգերի, առողջության, գյուղատնտեսական մթերքների և նյութերի վրա օդի աղտոտվածության ազդեցության վերաբերյալ:

**Հայաստանի համագործակցությունը ԵՄ-ի հետ**

Հայաստանը Եվրոպական Միության հետ կնքել է մի շարք պայմանագրեր, որոնց երկարաժամկետ նպատակն է Հայաստանի և ԵՄ-ի իրավական դաշտերի ներդաշնակեցումը, մերձեցումը և Եվրամիությանը Հայաստանի հնարավոր անդամակցության համար պայմանների ստեղծումը: Չնայած այդ պայմանագրերի հիմնական դրույթը շուկայական հարաբերությունների և տնտեսական համագործակցության միջև փոխկապակցությունն է, համաձայնագիրը ներառում է նաև հաստատությունների ամրապնդումը և արդյունավետ պետական կառավարումը, Էներգաարդյունավետությունը, շրջակա միջավայրը և

կլիմայական փոփոխությունների դեմ պայքարի միջոցները, շարժունակությունը և մարդկանց միջև շփումը:

2014 թ-ից ի վեր Եվրոպական Միությանը Հայաստանին շուրջ 120 մլն եվրոյի աջակցություն է տրամադրել:

**Որո՞նք են Հայաստանի հասարակական կազմակերպությունների հնարավորությունները**


Հայաստանը պարտավոր է իրականացնել միջազգային պայմանագրերով ստանձնած իր բոլոր պարտավորությունները: Հասարակական կազմակերպություններն ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում ունեն ազդեցության բազմաթիվ տարբերակներ՝

- մասնակցություն միջազգային բանակցություններին (կոնվենցիաներ, ՄԱՇՄԾ)
- պաշտոնական գեկույցների մեկնաբանում,
- մասնակցություն նախարարությունների աշխատանքային խմբերի նիստերին,
- կոնկրետ թեմատիկ հետազոտությունների նախաձեռնում, իրապարակում,
- մասնակցություն որոշումների կայացման գործընթացին,
- հայաստանյան բոլոր դատական գործերի օգտագործում,
- միջազգային մեխանիզմների կիրառում:

Սույն տեղեկատվական թերթիկը ստեղծվել է չեխական «Արնիկա» ասոցիացիայի կողմից՝ Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ՝ ՀԿՀԱԱՇՄ ՀԿ-ի, չեխական «Արնիկա» ասոցիացիայի և «ԵկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից համատեղ իրականացվող «Քաղաքացիական հասարակության ներգրավումը Հայաստանում հանքարդյունաբերության վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում» ծրագրի շրջանակում:



«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0019,  
Բաղրամյան պող., 24 ք  
Հեռախոս՝ (+374 10) 52 36 04  
Էլ. փոստի հասցե՝ office@awhhe.am  
Կայք՝ www.awhhe.am



**Շրջակա միջավայրի պահպանության միջազգային գործիքներ (Հայաստանում գործող ՀԿ-ների կողմից օգտագործելի)**

Association Women for Health and Healthy Environment NGO  
Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի ՀԿ

Հայաստանը ստորագրել է մի շարք միջազգային համաձայնագրեր՝ շրջակա միջավայրի պահպանության, թափանցիկության և որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության վերաբերյալ: Հայաստանը պարտավորվել է ընդունել և կատարել այդ փաստաթղթերի հատուկ պահանջները: Նկատի ունենալով վերոհիշյալը, հասարակական կազմակերպությունները կարող են կառավարություններից, միջազգային և միջկառավարական կազմակերպություններից պահանջել հետևել պարտավորությունների կատարմանը, որպեսզի դրանք չմնան միայն թղթի վրա: Յուրաքանչյուր միջազգային կոնվենցիա կամ միջկառավարական համաձայնագիր պարունակում է նաև որոշ գործիքներ, որոնք կարող են օգտագործվել մաքուր շրջակա միջավայրի իրավունքի իրականացման համար: Առավել կարևոր են հետևյալ գործիքները՝

- քիմիական կոնվենցիաներ (Բագտի, Ռոտերդամի, Ստոկհոլմի),
- Օրիուսի կոնվենցիա,
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան,
- ՄԱԿ-ի ստանդարտներ, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հատուկ զեկուցողներ,
- «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (Էսպո),
- Համագործակցությունը ԵՄ-ի հետ:

Գոյություն ունեն հասարակական կազմակերպությունների մի շարք ցանցեր, որոնց միջոցով ավելի հեշտ է մասնակցել միջազգային բանակցություններին, կնքել հուշագրեր և այլն: Օրինակ՝ ԿՕԱ-ների վերացման միջազգային ցանցը (IPEN) զբաղվում է թունունակ կյուլթերի ոչնչացման հարցերով, CEE Bankwatch միջազգային ցանցը զբաղվում է տարբեր առևտրային նախագծերի՝ պետական բյուջեներից ֆինանսավորման հարցերով և այլն:

### **Քիմիական կոնվենցիաներ (Բագտի, Ռոտերդամի, Ստոկհոլմի)**

Յուրաքանչյուր կոնվենցիա շոշափում է քիմիական նյութերի ազդեցության որոշակի ոլորտ: Բագտի կոնվենցիան կարգավորում է վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման հարցերը, Ռոտերդամի կոնվենցիան զբաղվում է վտանգավոր թափոններով և թունաքիմիկատներով,

Ստոկհոլմի կոնվենցիայի հիմնական նպատակն է վերացնել վտանգավոր կայուն օրգանական աղտոտիչները: Նախկինում յուրաքանչյուր կոնվենցիա ուներ իր յուրահատուկ կանոնները: 2017 թվականից սկսած անց են կացվել համատեղ «կողմերի հանդիպումներ» և սահմանվել են միասնական կանոններ, որոնք նպաստում են հասարակական կազմակերպությունների մասնակցությանը և ապահովում պահանջների կիրարկումը:

### **Ստոկհոլմի կոնվենցիա**

Հայաստանի խնդիրների լուծման համար, ըստ երևույթին, ամենակարևոր նշանակություն ունի Ստոկհոլմի կոնվենցիան: Հայաստանում այն ուժի մեջ է մտել 2004 թ-ին: Ներկայումս կոնվենցիան արգելների կամ այլ մեխանիզմների միջոցով կանոնակարգում է 26 նյութ՝ ներառյալ դիօքսինները, ֆուրանները, պոլիքլորացված բիֆենիլները, հեքսաքլորբենզոլը, ԴԴՏ-ն և այլ թունաքիմիկատներ, հեքսաքլորբիֆենիլը, պենտաբրոմդիֆենիլային եթերը, պերֆտորոկտանային սուլֆոնաթթուներ, հեքսաքլորբուտադիենը: Մեծ կարևորություն ունի հողված 10-ը, որը վերաբերում է հանրության տեղեկացվածության խթանմանը, իրազեկվածության և ուսուցման մակարդակի բարձրացմանը, տեղեկատվության տարածմանը, հանրության մասնակցությանը, ուսուցմանը, կրթությանը և ՀԼՄ-ների ներգրավվածությանը:

Այս միջազգային համաձայնագիրը վավերացրած ցանկացած երկիր (այդ թվում՝ Հայաստանը), պետք է նախապատրաստի թունունակ նյութերի վերացման ծրագիր և մշակի անհրաժեշտ ռազմավարություն, ինչպես նաև Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման ազգային ծրագիր: Հասարակական կազմակերպությունները կարող են օգտագործել այս առանցքային փաստաթուղթը, ապա մշակել գործողությունների նախապատրաստման և թարմացման պլան:

### **Օրիուսի կոնվենցիա**

Կոնվենցիան հիմնված է տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցության և բնապահպանական հարցերին վերաբերող արդարադատության մատչելիության գաղափարների վրա: Հայաստանը վավերացրել է այն 2001 թ-ին: Յուրաքանչյուր երեք տարին մեկ բոլոր պետությունները պետք է հրապարակեն ազգային

հաշվետվություն Օրիուսի կոնվենցիայի հիմունքների իրականացման վերաբերյալ (2017 թ-ին Հայաստանն այն քիչ երկրներից էր, որոնք հաշվետվություններ չէին ներկայացրել):

Կոնտակտային անձ՝ Հայկանուշ Պարսամյան, ՀՀ բնապահպանության նախարարություն

Օրիուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն ուսումնասիրել է հայաստանյան հետևյալ դեպքերը՝ C / 2004/8՝ Դավմայի այգիներում հողօգտագործման փոփոխություն, C / 2009/43՝ Լոռու մարզի պղնձի և մոլիբդենի արդյունահանում, C / 2011/62՝ Լոռու մարզի պղնձի և մոլիբդենի արդյունահանման լիցենզիայի վերականգնում, C/2016/138՝ Գնդեվազի բաց հանք:

### **Մարդու իրավունքների եվրոպական դատարան**

Միջազգային կազմակերպություն, որը որոշ պայմաններում կարող է գործել եվրոպական կոնվենցիայով երաշխավորված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մեջ մեղադրվող անձանց դեմ: Մարդու իրավունքների եվրոպական դատարան կարելի է դիմել երկրի բոլոր իրավական մեխանիզմների (բոլոր դատական ատյանների) սպառման դեպքում: Պետությունները պարտավոր են հետևել դատական որոշումներին, որոնք հաճախ հանգեցնում են համակարգային փոփոխությունների:

2014 թ-ից Հայաստանի դեմ 152 գործ է հարուցվել, որոնց մեծ մասը մերժվել է դատական հայց ներկայացնելու հիմնական պայմանները չկատարելու պատճառով (մասնավորապես՝ ներքին իրավական մեխանիզմների չկատարման պատճառով):

### **ՄԱԿ-ի ստանդարտներ, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հատուկ զեկուցողներ**

Առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքների մի մասն է և դրա խախտման դեպքում մարդը կարող է դիմել համապատասխան ատյաններին: Համաշխարհային մակարդակով մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացնում է ՄԱԿ-ը: Առանձին դեպքերում, օրինակ՝ գործի քննության, որոշ երկրներ այցելելու, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի համար ամենամյա թեմատիկ